ՀՀ Արմավիրի մարզի Վանանդի գյուղապետարանը (այսուհետ գյուղապետարան) հայտարարում է մրցույթ գյուղապետարանի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետի պաշտոնն զբաղեցնելու համար

- 1-ին կարգի մասնագետը աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է ծառայողական բնույթի նյութերի սահմանված կարգով համակարգչային կազմման աշխատանքներ: Պատասխանատվություն է կրում համակարգչային տպագրությամբ գյուղապետարանից ելքագրվող ծառայողական գաղտնիք պարունակող փաստաթղթերի գաղտնիության ապահովման համար: Ապահովում է իր կողմից սպասարկվող տեխնիկայի բնականոն և անխափան աշխատանքը: Ապահովում է հողի հարկի և գույքահարկի տեղեկատվական տվյալների շտեմարանի հետ կապված աշխատանքները և իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:
- Ունի առնվազն միջնակարգ կրթություն:
- Ունի սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի <<բ>> ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2015թվականի ապրիլի 30–ին, ժամը 14:00–ին, ՀՀ Արմավիրի մարզի Վանանդ գյուղապետարանի շենքում:

Դիմող ՀՀ քաղաքացիները գյուղապետարանի աշխատակազմ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- Դիմում մրցութային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս) դիպլոմի,աշխատանքային գրքույկի պատճենները բնորինակների հետ միասին.
- Տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճենները բնօրինակների հետ միասին.
- Արական սեռի անձինք՝ զինգրքույկի կամ դրան փոխարինող վկայականի պատճեննիսկականի հետ միասին.
- մեկ լուսանկար 3x4 չափսի
- Անձնագրի պատճենը
- Հայտարարություն այն մասին,որ նա չի տառապում 2005 թվականի մարտի 3-ի ՀՀ կառավարության N-310-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից մեկով:

ՀՀ քաղաքացիները մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերն հանձնում են անձամբ՝ներկայացնելով անձնագիրը:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր ժամը 10.00-ից 16.00-ն, բացի շաբաթ և կիրակի օրերից Վանանդի գյուղապետարանում կամ Արմավիրի մարզպետարանում Աբովյան 71, հեռ. 6-07-70 և 6-12-22

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրերին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել Վանանդի գյուղապետարան:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2015թվականի ապրիլի 8-ին: